Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2026 թվականի փետրվարի 15-ից 28-ը Հնդկաստանի Հանրապետություն (քաղաք Գանդինագար) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

1. Աշոտ Հարությունյան՝ Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 3-րդ բաժնի ավագ օպերլիազոր:

2. Մնացական Անտոնյան՝ Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 5-րդ բաժնի գլխավոր օպերլիազոր:

3. Ռազմիկ Գալստյան՝ Հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչության 13-րդ բաժնի ավագ օպերլիազոր:

4. Արման Աբրահամյան՝ Ներքին անվտանգության վարչության վերլուծության և տեղեկատվական անվտանգության բաժնի պետի տեղակալ:

5. Լուսինե Սարգսյան՝ Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 2 բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

6. Ալիսա Աղաբաբյան՝ Վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության ընթացակարգերի բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

7. Տաթևիկ Դանիելյան՝ Միջազգային համագործակցության վարչության մաքսային համագործակցության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

8. Լուսինե Խաչատրյան՝ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության իրավապահ համագործակցության և տեղեկությունների վերլուծության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

9. Կառլոս Հովսեփյան՝ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության պետական սահմանի ցամաքային անցման կետերի օպերատիվ հսկողության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ:

10. Կամո Ներսիսյան՝ Ներքին անվտանգության վարչության ծառայողական քննությունների և վարքագծի /էթիկայի/ կանոնների բաժնի պետի տեղակալ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Հնդկաստանի Հանրապետություն, քաղաք Գանդինագար, փետրվարի 15-ից 28-ը:

3. Հրավիրող կողմը՝

Հնդկաստանի Հանրապետության կառավարություն, Հնդկաստանի տեխնիկական և տնտեսական համագործակցության ծրագրի (The Indian Technical and Economic Cooperation Programme/ITEC) շրջանակներում:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր Հնդկաստանի Հանրապետության ներքին գործերին նախարարությանն առընթեր գործող Ազգային փորձագիտական գիտությունների համալսարանում (National Forensic Sciences University) մասնակցել «Ֆինանսական հանցագործությունների քննության և թվային հետախուզության առաջադեմ մեթոդներ» խորագրով դասընթացին:

5. Քննարկված թեմաները՝

- Ֆինանսական հանցագործությունների քննություն և դատափորձագիտական մոտեցումներ, ինչը հնարավորություն տվեց ծանոթանալու ֆինանսական հանցագործությունների տեսակներին, սպիտակ օձիքով հանցագործություններին, վարքաբանական դատափորձագիտությանը, հարցաքննության արդյունավետ մեթոդներին:
- Փողերի լվացման և տնտեսական հանցագործություններ, որի շրջանակներում մասնակիցները ծանոթացան առևտրի վրա հիմնված փողերի լվացման (TBML), կեղծ արժույթների և կնիքների փորձաքննությանը և գլոբալ ֆինանսական հանցագործությունների հիմնական դեպքերին:
- Թվային հանցագործություններ և կիբերհանցագործություններ, բջջային և կրիպտոարժույթների միջոցով ֆինանսական հանցագործություններ:

- Տեխնոլոգիաներ և արհեստական բանականություն, ինչը ներառում էր սոցիալական ցանցերի հետաքննություն, արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում ֆինանսական հանցագործությունների քննությունում, տեխնոլոգիաների կիրառումը ֆինանսական քննություններում ենթաթեմաները:
- Տվյալների վերլուծություն և հաշվետվություններ:
- Գործնական այցեր դատափորձագիտական լաբորատորիաներ, հոգեբանական փորձաքննության կենտրոններ, թմրանյութերի և տնտեսական հանցագործությունների ստորաբաժանումներ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացը ներառում էր ինչպես տեսական այնպես էլ գործնական բաղադրիչներ: Դասընթացի շրջանակներում մասնակիցները ձեռք են բերել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ, որոնք հիմք կհանդիսանան նրանց հետագա գործունեության և աշխատանքային գործառույթների առավել պատշաճ իրականացման համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այցի ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

Դասընթացի ավարտից հետո, թեստավորման արդյունքներով պայմանավորված, ՊԵԿ բոլոր մասնակիցները ստացել են հավաստագրեր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Դասընթացին մասնակցելը թույլ տվեց ՊԵԿ աշխատակիցներին բարձրացնել մասնագիտական գիտելիքները, ծանոթանալ միջազգային առաջավոր փորձին, որը հետագայում կտեղայնացնեն նաև ՀՀ–ում, հաստատել միջազգային կապեր ոլորտի առաջատար մասնագետների, փորձագետների հետ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Կամո Ներսիսյան

Արման Աբրահամյան

Աշոտ Հարությունյան

Մնացական Անտոնյան

Ռազմիկ Գալստյան

Լուսինե Սարգսյան

Ալիսա Աղաբաբյան

Տաթևիկ Դանիելյան

Լուսինե Խաչատրյան

Կառլոս Հովսեփյան

04.03.2026թ.